ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր,

իր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ժորա Ջհանգիրյան

«08» հունվարի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

Տիգրան Ստեփանի Զաքարյանի «Ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացումը միջազգային հարաբերություններում (ՀՀ օրինակով)» թեմայով՝ ԻԳ.00.04 – «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի Գլաձոր համալսարանի **Հակոբ Հակոբյանի անվան միջազգային հարաբերությունների ամբիոնի** 2026 թ. հունվարի 8-ի նիստում:

Նիստին մասնակցում էին՝ ամբիոնի վարիչ՝ ք.գ.դ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, ամբիոնի դասախոսներ՝ ք.գ.դ., դոցենտ Ռոբերտ Ղևոնդյանը, պ.գ.դ., դոցենտ Դավիթ Մանասյանը, պ.գ.դ. Նարեկ Պողոսյանը, ք.գ.դ. Վահե Պողոսյանը, ք.գ.դ., դոցենտ Հրայր Փաշայանը և ք.գ.դ., դոցենտ Ռոման Մելիքյանը:

21-րդ դարի երրորդ տասնամյակում միջազգային հարաբերությունների համակարգը թևակոխել է աշխարհաքաղաքական վերափոխումների և անորոշության նոր փուլ, որտեղ պետությունների աշխարհագրական դիրքը և հաղորդակցային հնարավորությունները վերստին դառնում են ազգային անվտանգության և ինքնիշխանության ապահովման վճռորոշ գործոններ: Այս համատեքստում ծովային ելք չունեցող զարգացող երկրների հիմնախնդիրը դուրս է գալիս զուտ տնտեսական կամ տրանսպորտային լոգիստիկայի շրջանակներից՝ տեղափոխվելով ավելի բարձր քաղաքականության հարթություն: Տիգրան

Զաքարյանի ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնք որոշակիորեն առնչվում են Հայաստանի Հանրապետության կենսական շահերին:

Համաշխարհային մակարդակում նկատվում է միջազգային իրավունքի նորմերի և կանոնների վրա հիմնված աշխարհակարգի ճգնաժամ, ինչը նոր մարտահրավերներ է ստեղծում փոքր և ծովային ելք չունեցող պետությունների համար: Թեև Միավորված ազգերի կազմակերպության Ծովային իրավունքի կոնվենցիան և այլ միջազգային փաստաթղթեր ամրագրում են պետությունների դեպի ծով ելք ունենալու իրավունքը, գործնական քաղաքականության մեջ տարանցիկ պետությունները հաճախ այդ իրավունքը ծառայեցնում են որպես քաղաքական ճնշման և հարկադրանքի լծակ: Հետևաբար, խիստ արդիական է դառնում իրավունքի և քաղաքական իրատեսության հարաբերակցության ուսումնասիրությունը ծովային ելք չունեցող երկրների համար, ինչը հնարավորություն է տալիս հասկանալու միջազգային իրավունքի սահմանափակումները ուժային քաղաքականության պայմաններում:

Հայաստանի Հանրապետության համար թեման ունի կարևոր նշանակություն, քանի որ 1993 թ. ի վեր Թուրքիայի կողմից իրականացվող միակողմանի ցամաքային շրջափակումը, զուգորդված Ադրբեջանի հետ շարունակական հակամարտությամբ, Հայաստանը կանգնեցրել է յուրահատուկ աշխարհագրական մեկուսացման խնդրի առջև: Ատենախոսության թեման արդիական է նաև նրանով, որ խիստ կարևորվում են նմանատիպ հետազոտությունների իրականացումը, որոնք համակողմանիորեն կվերլուծեն ու կգնահատեն Հայաստանի տարանցիկ հնարավորությունների անվտանգային բաղադրիչները, քանի որ ՀՀ գտնվում է բարդ աշխարհագրական ու աշխահաքաղաքական շրջափակման պայմաններում:

Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում թեմայի դիտարկումը հետպատերազմյան իրողությունների լույսի ներքո: 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած աշխարհաքաղաքական զարգացումներից հետո Հարավային Կովկասում տրանսպորտային և տնտեսական կապերի ապաշրջափակման հարցը դարձել է տարածաշրջանային օրակարգի առանցքային խնդիրը: ՀՀ կառավարության կողմից առաջ քաշված «Խաղաղության խաչմերուկ»

նախաձեռնությունը, ինչպես նաև տարբեր ուժային կենտրոնների կողմից շրջանառվող միջանցքային տրամաբանությունը պահանջում են խորքային գիտական փորձաքննություն:

Ատենախոսության մեջ առկա են էական թերություններ, որոնք առնչվում են ինչպես հետազոտության բովանդակությանը, այնպես էլ մեթոդաբանությանը, որոնցից հատկանշական են.

1. Գիտական նորույթ բաժինը խնրահարույց է, քանի որ ատենախոսը նշել է, որ հետազոտության փորձ է կատարել համապարփակ կերպով ներկայացնել Հայաստանի՝ ծովային ելք չունեցող երկրի կարգավիճակից բխող տարանցիկ իրավուքնների վրա ազդող իրավաքաղաքական գործոնները, որի վերաբերյալ միջազգային պրակտիկայում բազմաթիվ գիտահետազոտական աշխատանքներ կան: Մասնավորապես որպես գիտական նորույթ են ներկայացված՝ «վեր են հանվել Վրաստանի տարածքով հայկական ապրանքների տարանցման վրա բացասաբար ազդող արտաքին գործոնները» և «իրանական ուղու տարանցիկ ներուժի իրացման թե՛ երկկողմ, թե՛ աշխարհաքաղաքական խոչընդոտները», որոնք ևս դժվար է գիտական նորույթ համարել, քանի որ բազմաթիվ գիտական և հրապարակախոսական վերլուծություններ կան այս խնդիրների վերաբերյալ, որոնցից որոշները աշխատանքի արդյունքում ընդամենը փաստագրվել են:
2. Աշխատանքի երրորդ գլխի վերնագիրը անորոշ է և առաջին հայացքից չի համապատասխանում աշխատանքի բուն տեքստին, թեմային և նպատակի տրամաբանությանը: Մասնավորապես երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ատենախոսն անդրադառնում է դեպի ծով ելք չունեցող պետությունների բազմակողմ համագործակցությանը, ինչը չի առնչվում << արտաքին քաղաքականության բազմակողմանիության տրամաբանությանը, քանի ներկայացվող օրինակները շատ ընդհանրական են:
3. Ատենախոսության թեման, թեև առաջին հայացքից թվում է արդիական, այնուամենայնիվ մեր գնահատմամբ որոշակի խնդրահարույց կողմեր ունի: Թեմայի «տարանցիկ իրավունքների իրացում» ձևակերպումից, ինչպես նաև ատենախոսության բովանդակությունից հստակ չի հասկացվում, թե հեղինակը

ինչ դիտանկյունից է խնդիրը ուսումնասիրում՝ միջազգային հարաբերությունների և աշխարհաքաղաքականության, թե միջազգային իրավունքի համատեքստում: Հետևաբար շարադրված նյութից պարզ չի դառնում, թե ատենախոսության թվանիշը վերաբերում է միջազգային իրավունքին, քաղաքագիտական հետազոտություններին, թե միջազգային տնտեսական հարաբերություններին:

4. Ատենախոսության մշակման մեթոդաբանության հատվածում թեև հեղինակը նշում է, որ աշխատանքի մեթոդաբանական հիմք է հանդիսացել ռեալիզմի տեսությունը (ուժերի հարաբերակցության, պետության արտաքին քաղաքական որոշումների վրա ազդող կառուցվածքային սահմանափակումների վերաբերյալ առկա տեսությունները), սակայն աշխատանքում ներկայացված նյութը (որը հիմնականում նկարագրողական բնույթ ունի), որևէ կերպ չի վերլուծվում վերոնշյալ տեսության համատեքստում:
5. Երկրորդ՝ «Դեպի ծով ազատ ելքի խնդիրը հարևանների հետ Հայաստանի հարաբերություններում» գլուխը, որտեղ դիտարկվում են Թուրքիայի, Վրաստանի և Իրանի հետ հարաբերություններում խնդիրները, հիմնականում նկարագրողական բնույթ ունի, քանի որ ներկայացվում են միայն պատմական փաստերը՝ սկսած 1990-ականներից, միաժամանակ արվում են տարբեր պաշտոնյաներից մեջբերումներ, բացակայում է վերլուծական հատվածը և նորույթ պարունակող եզրահանգումները:
6. Ատենախոսությունն էապես կշահեր, եթե հեղինակը համակողմանի անդրադարձ կատարեր արդի աշխարհաքաղաքական տեղաշարժերին և դրանց ազդեցությանը ծովային հաղորդակցության ուղիների վրա: Մասնավորապես, արժեքավոր կլիներ վերլուծել, թե ներկայիս հակամարտությունները՝ Ուկրաինայում ընթացող պատերազմը, Մերձավորարևելյան տարածաշրջանում (Գազայի հատված) սրացումները և Կարմիր ծովում հութիների հարձակումները, ինչպիսի շղթայական խաթարումներ են առաջացրել համաշխարհային լոգիստիկ ենթակառուցվածքներում՝ ազդելով նաև դեպի ծով ելք չունեցող երկրների՝ այդ թվում նաև Հայաստանի վրա: Աշխատանքում կարող էր քննարկվել այն իրողությունը, որ կորոնավիրուսի համավարակից հետո մեկնարկած վերականգնման փխրուն գործընթացն էլ ավելի է բարդացել գլոբալ

մակրոտնտեսական անկայունության պատճառով: Սա իր հերթին էապես մեծացրել է դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խոցելիությունը: Միջազգային անվտանգության համապարփակ ճգնաժամը, մատակարարման շղթաների խաթարումները, պարենի ու էներգակիրների գների տատանումները, ինչպես նաև կլիմայական մարտահրավերները ստեղծել են հավելյալ արգելքներ այս երկրների զարգացման հեռանկարների համար: Նմանատիպ գործոնների ներառումը թույլ կտար առավել ամբողջական պատկերացում կազմել դեպի ծով ելքի իրավունքի իրացման արդի խնդիրների և հնարավոր լուծումների մասին:

7. Ատենախոսության էջ 27-ում ատենախոսը նշում է 2023 թ. Երևանում տեղի ունեցած ծովային ելք չունեցող զարգացող երկրների նախարարների հանդիպմանը ՀՀ ԱԳ նախարարի հայտարարությունը՝ ընդգծելով պետությունների ինքնիշխանության և իրավազորության նկատմամբ հարգանքի կարևորությունը՝ որպես հակադարձում Սյունիքում արտատարածքային միջանցքի վերաբերյալ պահանջին: Այս հատվածն ատենախոսության թեմայի հետ որևէ կապ չունի: Այնինչ այդ հանդիպման ժամանակ Հայաստանի կողմից նշվում է «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի մասին, Հյուսիս-Հարավ մայրուղու շինարարության մասին՝ ընդգծելով ոչ միայն կապահովի ավելի դյուրին հաղորդակցություն Հայաստանի հյուսիսային և հարավային շրջանների միջև, այլև նշանակալի կերպով կնպաստի Պարսից ծոցի և Սև ծովի միջև փոխկապակցվածությանը՝ դառնալով կարևոր տարանցիկ հանգույց Արևմտյան Ասիայի և Արևելյան Եվրոպայի միջև:

8. Առաջին գլխում բերված են դեպի ծով ելք չունեցող մի շարք երկրների հետ կապված մասնավոր դեպքերը, սակայն բացակայում է դրանց մեջ ամենամեծ բնակչություն ունեցող պետության՝ Եթովպիայի շուրջ ստեղծված իրադրության վերլուծությունը, որը ներկայացվում է որպես «գոյաբանական խնդիր» և կարող է նույնիսկ հարևանների հետ ռազմական հակամարտության պատճառ դառնալ:

9. Երկրորդ գլխի առաջին ենթագլխում ատենախոսն ավելի շատ կենտրոնանում է հայ-թուրքական սահմանի փակ լինելու և բացման հնարավորության մասին այն դեպքում, երբ այն լիովին առանձին թեմա է, քանի որ, ճիշտ է, սահմանի բացումը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է դեպի ծով ելքից օգտվելու համար:

Իսկ թե ինչ գնով, ինչ ընթացակարգերով և որ նավահանգիստներից կօգտվի Հայաստանը, դա պահանջելու է առանձին համաձայնություններ:

10. Ատենախոսության 69-71 էջերում նշվում է ցամաքային և օդային տարածքով Վրաստանից բեռների փոխադրման մասին, ինչը հետազոտության թեմայի շրջանակներից դուրս է:
11. Ատենախոսության երրորդ գլխում բացակայում է անդրադարձը «Միջին միջանցք»-ի (Trans-Caspian International Transport Route) թեմային: Ներկայումս այս միջանցքն անցնում է Ղազախստանով, Կասպից ծովով, Ադրբեջանով և Վրաստանով դեպի Թուրքիա: Եթե բացվեն հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմանները, Հայաստանը կարող է դառնալ «Միջին միջանցքի» հարավային թևը: Սա Հայաստանին հնարավորություն կտա ուղիղ ելք ունենալ դեպի Միջերկրական ծովի թուրքական նավահանգիստներ և Կասպից ծովի ադրբեջանական նավահանգիստներ՝ դառնալով Վրաստանի այլընտրանքը:
12. Հետազոտական աշխատանքի 101 էջում անհասկանալի է ՆԱԵԿ (OPEC) երկրների կողմից նավթի կայուն գների ապահովման շուրջ շահագրգռվածության համեմատությունը ցամաքով շրջապատված երկրների արտաքին քաղաքականության հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ նշված թերություններով հանդերձ, Տիգրան Ստեփանի Զաքարյանի «Ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացումը միջազգային հարաբերություններում (ՀՀ օրինակով)» վերտառությամբ ատենախոսությունը կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության և միայն պատշաճ պաշտպանության, մասնագիտական խորհրդի անդամների մոտ վստահություն ձևավորելու դեպքում ատենախոսը կարող է արժանանալ հայցվող գիտական աստիճանին:

ԵԳՀ Միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ
քաղ. գիտ. դոկտոր, դոցենտ Նարեկ Գրիգորյան

ք.գ.դ., դոցենտ Ն. Գրիգորյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵԳՀ գիտական քարտուղար Ռիմա Այդինյան